

# ՀՆՉՄԱԿ

## Տ Ս Ս Ե Ե Ի Զ Ի Ն Գ Յ Ո Ի Լ Ի Ս Ը .

### II

Մեր անցեալ առաջնորդում մենք խօսում էինք այն կէտի մասին, թէ Տասնէկնգ Յուլիսը սրբախ մեծ նշանակութիւն ունի եւրօպական քաղաքականութեան նկատմամբ և թէ Եւրօպայի վերաբերութեամբ սրբախի գիրք, ազգութիւն ու սակաւ պէտք է անհնան հայերը յեզատիտական գործում, որ հասնեն իրենց անկախ ազատութեան նպատակին: Այսօր մեր խօսքի նիւթը կլինի այն ազգեցութեան մասին, որ անեցան Տասնէկնգ Յուլիսը և ընդհանրապէս հայ ժողովրդի խրատ մեները Թիւրքիայի վրայ և այն նշանակութեան մասին, որ ունի Տասնէկնգ Յուլիսը Թիւրքիայի վերաբերութեամբ:

Տակաւին յիստորիական թւականներին, Վրիտի պա. աերազմից յետոյ, Թիւրքիայի աշխարհազորական բա. մասումը եւրօպական աէրօթիւնների համար գարձու մի նպատակ: Գուրս միջի թիւրքական իշխանութիւնը Եւրօպայի մէկ այնպիսի մասից, որ գրաւում է նշա. նու որ աշխարհազորական գիրք եւրօպական առևտրի ու կոյճիական (colonial) քաղաքականութեան առևտրից — եւրօպական պետութիւնների վարչարարական բազմանքն է: Մի ժամանակ Թիւրքիայի գերիշխանութեան տակ գանձող մանր ժողովուրդների, ինչպէս Չերնօգորիւսի, Բումէլիայի, Սերբիայի, Բոզգարիայի և այն միմեանց յաջորդած գաղութի Թիւրքիայից և զրանցից իւրա. քանչիւրի առանձնապէս սեփական ինքնավարութեան մէջ սահմանվին արդիւնք էր թէ և այդ ազգերի յեզատի. խական ու ազատական շարժումների, բայց հազիւ թէ իրականանար, եթէ զրա մէջ եւրօպական պետու. թիւնները շտնանէին իրենց վերոյիշած բազմանքի գոր. ծաղրութեան անհրաժեշտ սրայմանք: Եւ այդ մանր ազգութիւններից ամեն մէկի Թիւրքիայից գաղութը ձգտման ու յեզատիտական փորձերի ժամանակ եւրօպական այս կամ այն աէրօթիւնն իր բոլոր ճիգը գործ էր գնում իր հովանավորութեան տակ անցնել նոր գաղտնի ազգին: Եւրօպական այդ.

պիտի ճիգ գործ գնող այս կամ այն աէրօթիւնը, բնականաբար, աշխատում էր միայնիկ իրեն հետ գաղտնի ազգին ու նրա հողը, բայց դա անաջող էր լինում շնորհով մի կողմից եւրօպական գաղտնի աէրօթիւնների իրար հակառակ շահերի և մի ու կողմից գաղտնի ազգի ազատական շարժումների: Բայց խնդիրն այս վերջին կէտը չէ:

Եւրօպական պետութիւնների այդ քաղաքականութիւնը քաջ յայտնի է Բ. Գրան: Նա գիտէ, որ իր հարատակ իւրաքանչիւր փոքր ազգութեան գաղտնի ու ազատական շարժումներն առաջացնում են Թիւրքիայի բաւանման խնդիրը, որ ուրիշ խօսքով նշանակում է Թիւրքիայի վերջնական քայքայման ու կործանման խնդիր: Նա գիտէ, որ եւրօպական իւրաքանչիւր մեծ պետութիւն հէնց այդպիսի մի նոր առթի է սպասում, որպէս զի իր սրած ահաւանները խրէ Թիւրքիայի մար. միտում և պոկէ նրանից համեզ պատաս: Նա գիտէ, որ մինչև այժմ պակած այդպիսի պատասանները Թիւր. քիայի սյուրն իսպաս քայքայեցին, դարձրին նրան խաղաղիկ եւրօպական պետութիւնների շահերի, մտա. նեցին նրան à la merci de l'Europe. Նա գիտէ, որ Թիւրքիան օրգանապէս քայքայված է, որ այժմ նրա զոյաթիւնն իր սեփական ներքին սյուրն ու գորտթեամբ չէ սահարանվում, այլ եւրօպական պետութիւնների միմեանց հակառակ շահերի շնորհով է նա գետ կեն. գանի: Նա գիտէ, որ եթէ եւրօպական այս կամ այն աէրօթիւնը երբեմնապէս պաշտարանում է Թիւրքիային ուրիշ մեծ պետութիւնների առջև — դա այն պատճառով որ իր գիտումների բարարար գործադրութեան համար րօպէն անյարմար կամ անաջող է համարում: Նա գիտէ, վերջապէս, որ Թիւրքիայի բաժանման խնդրի լուծումը միայն ժամանակի գործ է, փայ թէ ուշ այդ բաժանումը աեզի կուեննայ:

Քաջ գիտնալով այդ ամենն, այժմ Թիւրքիան երբ որ աենում է, որ իր հարատակ որ և է ազգ նրանից պատվիրա փորձեր է անում, սարսափ է զգում այն սպասնական հետանքներից, որ կատաղացնեն այդպիսի փորձերը: Ար և է Թիւրքաշարտակ ազգի ամեն մէկ

ազատական շարժումը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մի նոր մահացու վէրք թիւրքի տիրապետութեան մարմնի վրայ . ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ թիւրքի հոգևարքի ժամկան հնչիւնը . ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ եւրոպական այս կամ այն տէրութեան անհամբեր սպասում առիթը, որի զօրութեամբ կրկին երևան կգայ թիւրքի տիրութեան մաս խնդիրը:

Ահա այս նոսր տեսարանն, իր այս սե տարզան նկարվեցաւ թիւրքի աչքին, երբ 15 Յուլիսին յանդուգն կերպով ձայնեց հայի սպասումը ատրճանակը նոյն իսկ սուլթանանիտա քաղաքում: Մեծ Յոյցից թիւրք կառավարութիւնը շիտթվեց և կատաղեց մի և նոյն ժամանակ «Չօրք, զօրք, կտորեղ սպասումը ներքին», գոչեց սուլթանը հոգևարքում գտնվող յաւատարմութեամբ: Ապստամբ հայի արիւնն առաջին անգամ սոսկեց թիւրքի փողոցները: Հայն իր գլուխն արդէն բարձրացրած էր յեղափոխական դրօշ ձեռին... Յանկարծ եւրոպան վեր թռաւ և աչքը գցեց դէպ Արևելք. — այնտեղ ստատարապետ էր ազատ անկախութիւնը գարեբով ստրուկ մնացած մէկ ազգի...:

Եւ թիւրքի տիրութեան խնդիրը նորից երևան ելաւ: Ամեն ճիգ, ամեն ջանք, զորք դրած սարսուփած թիւրք կառավարութեան ու նրա չղջորթ ու կեղտոտ մամուլի կողմից եւրոպայի աչքին աննշան դարձնելու: 15 Յուլիսին — ազարդիւն անցան «Թիւրք բիրտը ձայնեց» հայի անունը տվին, նրա անկախ ազատութեան ճըզ տուրք յիշեցին և եւրոպական մամուլը նկարագրեց մեծ օրվայ անցքը:

Թիւրքի տիրութեան մերկ մարմինը կրկին ընդհանուրի քննութեան ենթարկվեցաւ . ամենքը տեսան, որ թիւրքի երկունքի մէջ է. — նրան գեռ ստրուկ մնացած օտար ազգութիւնների ազատութիւնը ծնվելու վրայ է գնով նրա, թիւրքի, սեփական մահի:

Անս թէ ինչ յոյց տվեց Տաճկաստանին 15 Յուլիսը:

Ն Ո Ւ Է Ր Ի Մ Ը Ն Կ Ե Ր Ի Ն .

(Կենսագրական տեղեկութիւններ Յարաթին Չանկիւլեանի մասին)

«Ես և գուցէ իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց անկումը ճանապարհ կը բացէ մեր հետևողների առջև . նրանք կանցնեն մեր գիտկների վրայով»

Բաֆֆի:

1888 ամբողջ կիրակի առաւօտ մ'էր. Գուզգունճուրի գլխովիբը կը բարձրանայի մենաստրիկ: Նոյն օրը Կ. Պօլսոյ


ամեն կողմերէն, խաներու խոր անկիւններէն քաջամբնդհանուր շարժում մը կար դէպի այս կողմ. ճանապարհը շուտ կը հայ պանդուխտներով. չը նայելով անվերջ ճանապարհի զժուարտութիւնը, արևի այրող ճառագայթները, որք համայն քրտինքով ողորած էր, ամբողջ խումբ խումբ շապով կը յառաջանար դէպի Ալեքսանդր, դէպի ս. Խաչ եկեղեցին. այն օր Խաչի տօնն էր. հոն էր Հայրիկ, նա պիտի խօսէր իր ստորական յուզիչ լեզուով:

«Մի աճապարէք, տղերք, շտա է, կը հասնինք» լսեցի մի խումբ վանցի ուխտաւորներէ, ևս մօտեցայ ու սկսայ հետեւել: Երկայնահասակ, նիհար մի երիտասարդ բնիկ բաղկած էր իրենց . սև ու կարճուկ մազերով, լայն ու ակոսացած ճակատով, լայն յոնքերով ծածկուած վառվառն աչքերով, չոր ծնօտին բարակ շրթներուն վրայ երկայն ու թաւ պիտեղով, վերջապէս իր երկայն ու ջրաւ բաղուկ ներքով հարազատ գլուխն ու ճշգրիտ տխարան կը ներկայանէր իր մայրենի հողին, վառարակական գաւառին. իր մտախոհ ու զլխիկոր քաջամբնով անկարելի էր չը համակրել, չը հրապուրել. ընկերներէն մի ակնածութիւն, մի մասնատր յարգանք ու պատկասանք կղզայի դէպի այս անձը . նոցա երկար վիճաբանութեանց, այլևայլ գատողութեանց վճռական կարծիք, անվիճելի որոշում էին իր մի քանի խօսքերն. նա կառաջնորդէր իր ընկերները թէ ճանապարհին և թէ նրանց խորհուրդներին՝ բարոյապէս և մտաւորապէս: Այս հանդամանքներով նա յետոյ յետէ խորհրդաւոր կը թուէր ինձ: Գտնեալով բարեկցի ու սկսանք խօսել: Հայկական խոհականութիւնը չէր ներկայ իրենց առաջին անգամ ծանօթին մերկանալ. ևս անծանօթ էի իրեն, իսկ ինձ համար բաւական էր այնքան նկատել ու լսել, անյայտ զօրութիւն մը զիս կապել, ներքին սէր մը գոյացաւ իմ մէջ. այլ ևս նա ծանօթ էր ինձ, բարեկամ էր: Անկասկած նետուեցայ խօսքի մէջ, շարունակեցի ինչ որ օրօտն առարկայ էր — «Հայրիկը»: Հեռաբքի հայեացքով, սուր գատողութեամբ նա կը լսէր, ու չաղբութեամբ կը քննէր մէն մի բառ, մէն մի շեշտ. նիւթը փոխվեցաւ, անզգայապէս մենք եկանք ողբացեալ մեր վրաբանին, Բաֆֆի, իր կայծերուն ու խնթին. խօսակցութիւնը գարձաւ աւելի լուրջ ու մտերմական: Կարճ ժամանակի մէջ մենք շտա առաջացել էինք խնդրոյ խորք, աւելի կենսական ու կարևոր հարցերով կրթողներ, երբ տեսանք մեզ հասած եկեղեցոյ գուռը: Այսչափով մենք արդէն հասկացած էինք զիրար, կարգացած էինք սրտերու ամենափափուկ ծալքերը... Չեւր տարով իրաւունք մենք լսին կնքեցինք կրթարական սիրոյ գաճ: Մենք ուխտեցինք միշտ հաւատարիմ մնալ մեր զգացմանց, անբաժան անջանցութեամբ, գործնականապէս նետուել ու լինել մեր թշուաւ եղբարց նուիրեալ անձնուրայ մշակներ. իսկ Հայրիկ իր նոյն օրուայ մրտաւնջով ու օրհնութեամբ կարճես սրբագործեց մեր ուխտ, նուիրական զգացմանց անբաժանելի շղթայով ամբողջին կապեց մեր սրտերը:

Այլ նս նա հմ օրտակիցս էր, եղբայրս էր, այլ ևս

կապում էր ներկայի և ազագայի մէջ մի ընկերի հետ, որ մի մեծ առաջնորդ լինելու կոչում էր, նշանաւոր գործերի մէջ նշանաւոր ծաւալութիւնների ընդունակ վերջապէս Տաննակնից Զուլի սի ժողովրդային արխանակնի մեծ շարժման առաջնորդելու կոչումն ու բաժինը ունէր Զարտիստ Զանկիւլեանը, որտան հերոսն է նա, տառապեալ ժողովրդի մարմնացեալ ու կենդանի բողբոջն է նա, նոյն ինքն է որ թշուառ եղբարց օրինաւոր պահանջը կարգաց մայր եկեղեցւոյ բեմին վրայ և յետոյ սուլթանին անձամբ կարգաբաժնաւորութիւնը ցոյց տուցի: Այս կը ցուցի իմ եղբոր կորստեան և միևնոյն ժամանակ կը նախանձիք իր վիճակին, որ փառք ու պատիւ է ինձ և ժողովրդական յեղափոխական գործոց Առ-

տակցութեան. „Հնչակի“ հնչած ազատ ու վսեմ ձրց. տունների, քաղաքական ու անտեսական լիակողմանի ազատութեան և արտահոլութեան կենսական պահանջին կենդանի մարտիրոսն եղաւ Զանկիւլեանն իր դոճում ընկերներով:



Հայց կը թողում այդ: Այս ամենէ աւելի պարտաւորութիւն կը դամ գրել այստեղ Հնչակի ընթերցող եղբայրներին ինչ որ ստիժ եմ ունեցել իմնեալ և ինչ որ կը յիշեմ այժմ մեր անգին ընկեր Զանկիւլեանի անցեալ կեանքէն:

Այս ծնվել է վան քաղաքի մէջ 1852 թ. իր ծնողները մանչ զատակ շաննեալուն պատճառաւ փառց խոտաւ էին նուիրել: Այստեղեմայ ու Զարտիստ տաճարին եթէ երբէք կատարուի իրենց բողբոջութիւնը, երեկայի ծնունդէն

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՆԿԻՒԼԵԱՆ

Մ Ե Ր Ե Ր Վ Ը .

Այս ըստարեկ շենք բանաւորին  
Մենք այն օրից յաղթական,  
Երբ ծածանվել սկսաւ մեր ձեռին  
Վե՛հ գրոջալը մարտական

Ոգին անմահ ազատութեան  
Կենդանութիւն մեզ արեւոյ,  
Աւետիսը երանութեան  
Արտաճայն մեզ հնչեց:

Երաւ սրտից արիւնդարամ  
Հրաւէր գէպ մարտ ահալից. —  
Մեզ հրեւիեցաւ պատկ անթառամ  
Արիւնաներկ գափնիից:

Ճանգաս սուրը մեր փայլիւրջից  
Փշուրտով զոս, սպանական,  
Աստ՛ — կուրծքը մեր ձայն հանց,  
Աստ՛ — լուից պատասխան:

Տես, բանակալ. ժողովրդի  
Լէգէճներն այն խոնկած  
Որհասական ու սուրը մարտի  
Չինւորներն են անձնուրաց:

Նրանք ձգտում են լինել իրենք  
Իրենց տէրն ու ղեկավար,  
Իրենց կամքը գարձնել օրէնք՝  
Ամենրին էլ հաւատար . . .

Լըսում ես դու այն ազգայակ  
Ապտաւորած ամբոխի. —  
Քո անկման է նա նըշանակ,  
Քո, բանակալ թընամի:

Անդուսոյ, բնակած ազատութեամբ  
Լափում էր մեր կայքեր  
Եւ վաճաղիքի անյարութեամբ  
Կանում մեզից բխր կեանքեր:

Մռիգնութեամբ անսանձելի  
Պատիւն էր մեր ծաղկում  
Եւ ծարսում դու կատաղի  
Մեր արիւնք միշտ ծրծուի:

Քո բնութեան ստոթալի  
Լըծի տակը գարնար  
Դարձանք զետուն մերկ, տանիլի  
Քեզ խաղաղիլի մէկ անդուր:

Այժմ ցտակաւ, նգովված տիրան,  
Մեզ բանա, արսար սահմանիր,  
Մեզ բարձրացուր սե կախազան  
Եւ կամ արիւնն մեր թափիր, —

Բայց ծխվաւ է արդէն սպառամբ  
Մեր հրացանը սիրական,  
Ուրի ենք մենք՝ արիւթեամբ  
Մղիլու կրտս յաղթական:

Այժմ մենք ենք լակ գառուոր  
Ոճիրներից մեծ, խըսով.  
Արգարտութեան պատիժն հըզոր  
Պէտք է ստանաւ մեր ձեռով:

Շուրջ տիրում է իրարանցում,  
Շուրջ շառաչելն սըրբիլի,  
Ճնշողի դէմ սարակը երկում  
Չիլ ձայնիցը փողերի:

Եւ աներկիւզ ու անոտան  
Կերթանք գաջալը սուրբ մարտի,  
Ազկարված ազատութեան  
Անունով վե՛հ, պանծալի:

Արտանցաս կըկատարաներ  
Շղթաները ստրկական,  
Կզահախմենք, կըկոխկրանք  
Անարգ կուրքը բնութեան:

Կեցցէ՛, օվ սուրբ ազատութիւն,  
Քո կանթեղով հրաշալմաւ,  
Կեցցէ՛, ըղձած եղբայրութիւն,  
Ողջոյն, կեանք նոր ու արդար . . .

Եւ ազատված ողջ հայութիւն  
Կաննէ թըսիչ արծիւէ,  
Մինչքե՛ղ, տիրան, րե՛ղ, բնութիւն,  
Անկման ամօթն կըխոնդղէ: | .

վերջ տարած նուիրած են տաճարին և ինչպէս որ տաճարութիւն է, փողով նորից գնեցին տաճարէն: Իբր սոյն տաճարի նուէր, անունը արտել է Յարութիւն և վերջ Հ ա ճ ի ամականն այ կցուեր Իր հայրը սարի, հրացանի և այլ գէնքերու, երկաթի վրայ սակեթել բանայ յաջագակ և միակ վարպետն է եղեր: Աս ոչ որին չէ կամեցել տաճարեցնել իր արհեստական հմտութիւններն՝ և ասանց ստիպեցնել կարենայու իր սրբուցն՝ կը մեանի: Երբ 13 տարեկան հասակով սրբ կը մնայ Յարութիւն, կատիպութիւնով գոյրացը ու արհեստի երթալ հայ ճարտար: Աս խապէս ներկարարի բով աշակերտ կերթայ: Մանր աշխատութեան և վարպետի կոչաւ ու անկիրթ վարժանքին չզիմանար, վաճառական այլ և այլ բարեկամներու բով կերթայ: Վերջապէս ա՛ւանձին փոքր խանութ բանայ կաջողի, մի և նոյն ժամանակ հայրենասէր երիտասարդաց ժողովին գլխաւոր անդամներէն մին կլինի: Իր կրակաւ գործունէութեամբ Վանայ երիտասարդաց մէջ նշանաւոր էր հանդիսանայ, վրիժաւոր ու սարհափեցնող տեսութեան գործերու մէջ միշտ առաջնորդ ու պարագլուխ կը յայտնուի: Վերջին պատերազմի ժամանակ Ալաշկերտի կոտորածին ներկից կը գտնուի և շատ օգնութեանց կը հասնի: Վերջապէս մէկ օր կատիպութիւն հետանայ Վանէն 6 տարեկ ի վեր Ա. Պօլիս եկած էր, այլ և այլ աստարով կը բազմաթէ Վան, թէ Պօլիս նա շարունակ կը պարագլուխ ինքնազարգացողութեամբ մեծ աջակցութեամբ Ամեն տեղ իր համարձակ ու յանդուգն բնաւորութեամբ հանրամտօթ էր. նա չէր կարող ասնել թիւրք մօլլային ձգած արհամարհական նայուածքը. վա՛յ անոր որ կը յանդգնէր անիրաւ արար պարտաւելի խօսք մ'ուզելի: նա չէր կարող տեղի տալ սարկական անարգ բնաւորութեան և սղոյննա չէր կարող վարժուել անիրաւ հայհոյութեանց. ինէր թէ զինուորական, թէ ի մ'ա մ, թէ պաշտօնեաց, նոցա հաստար կնիտակ էր իրեն, նոցա բռնապետական արհամարող աստակութիւնը իրեն նորօրինակ ու անընդունելի էին: Չանկիւրեանն իր անձին համար միայն չէր այգպէս. նա միշտ և ամեն ժամանակ օգնութեան կ'հասնէր հայ արհեստաւորներուն, հայ բանօցներուն: Արա համար բաւական էր անիրաւ յարձակում մը, փոքր կռիւ մը տեսնայ, նախատող խօսք մը լսել ընդդէմ հայ գրացոյն, նա կ'հասնէր իսկոյն. նրա արիւնտաւ աչքը, բարկացաւ ակնարկը մի քանի զգուշացնող յորդորներով բաւական էին տեսպատուել ու սարսափ ազդել հակասակող թիւրքին: Հարտարտաւ նա կերեկէր սրպէս ծնած հայու ազատ անցեալի ազատ շրջանի մէջ ու անած նոյն ժամանակուայ ազատ ոգով ու շնչով. գարեւոր սարկական շիթայն ասանց կրկին՝ կարծես խոր քունէ մը նա նոր գարթից ու յանկաշիւ մտել էր այժմեան տարօրինակ, անձուկ ու ստորկական կեանքի մէջ:

Չանկիւրեանը ժողովրդի ծոցէն դուրս եկած, նրա ցաւերու գիտակ ու հարստացաւ գաւակ է: Աս գիտակ ժողովրդի մահաւոր թշուառ կացութիւնը. նա յաւ կ'զգայ տիրող կոչաւ ու բարբարոս ձեռքի սպանանացող սուրբ ու ինչ կատարող գերութեան շիթան, վերջապէս նա գիտակ

այս ամենուն արիւնտաւ գարմանը: Իր թշուառ համար նա չունէ երբէք ո՛չ գով, ո՛չ կարեկցաւ թիւն: Արա թաւ յոնքերը վանխաւն ու կրակաւ աչքերով բաւական են գոյացնելու: Աս շատ խառնապահանջ էր զէպի ընկերները. նրա հետ պէտք էր ծայրացեղ կերպով անկեղծ վարվիլ. փոքրիկ երկմտի խօսք մը, կողմնակի ակնարկ մը կարող էր խառնապէս վերաւորել զինքը: Բայց այս յատկութեանց հետ գարմանով էր իր երկար համբերութիւնը: Աս բաւ կը յիշեմ՝ նրա երբեմնակի ժպտուն զէմը՝ զիչերուայ ամառաւ երկնքը՝ փայլուն լուսնի նման, նրա մեղմ համոզիչ արտայայտութիւնը, բայց և նորա զէմքի մնայն ու յագումն հանդարտ ծովու վայրկեանական աղեկածութեան նման էր, երբ յարձակող ու վրդովվեալ շեշտակով ժողովրդային գործի փաստարանութիւնը կը նկեր: Իր զլիսս որ յատկանիչն էր այս փոխփոխութիւն, որ միանգամայն տեղի սիրելի կը նմայէր զինքը և օրի այժմ անմասնանալի տխուր և մի և նոյն ժամանակ միսթարական յիշատակ մը կը թողուն հաստարթմ սրտերու:

Յուլիս Տասնէ Հինգի արիւնահեղ Յոյցին նորա ձերբակալման ատթիւ յիշեմ մի քանի ժանրամանութիւններ, որոնք բնաւորչ են: Արա եւանզը, օգնութիւնը և բազմութեան վրայ ունեցած ազդեցութիւնը Տաճար վարդապետի աչքին կը գտնուի պատերազմային մէջ և նրա ձեռնառն յաղաչական համոյրը գրգռելու կ'հնարցնէ. «Ի՞նչ է անունը»: Չանկիւրեանը խորհրդաւոր կերպով կը նայի վարդապետին վրայ և կը պատասխանէ. «Ի՞նչ պիտի ընես», և յետոյ կը հարկ խորհրդաւոր եղանակով. «Անունս Մ ա հ կ ա մ Ա զ ա ա ս օ թ ի ՚ ն է»: Յայտնի է որ նա իր Յոյցի պարագլուխ ձերբակալիցեաւ: Իր հարցաքննութեան ժամանակ նա ոչինչ պատասխան չէ տուած, միշտ ասելով. «Տարէք ինձ սոյթանին, այնտեղ բոլորը կը յայտնեն»: Իր հարցաքննութիւններից յետոյ, զինուորական տեսանք նորան մահուան կը զատապարտուի Ահա իր նախնին այդ գառապարտութիւնէն մէկ օր յետոյ գրուած. — «Երկար, երկար, շատ ամաւր կերպով սեղմում եմ ձեր ձեռքեր և համբուրում եմ ամենիդ. սալա յարով սրբարով կրտեմ ձեզ մնա՛ր բարեաւ, օրս կը բաժնուիմ ձեզնէ. այսօր իմ ճրագս կը լուսնի աշխարհէս. յեղափոխական ճրագը թող վառ մնայ և արծարծէ սէր և միտթիւն . . . Բարեբարդ իմ . . . ես կազատուէի շատ շուտ, բայց Տաճարի երկու թրքերէն գրութիւնք իմ կը բաւանաւ պատճառ եղան, նմանապէս և . . . իսկ նա կը մեռնիմ. դուք լուծեցէք վրէժ . . . Տաճար իմ վերջին բարեա . . . է ասելի հանրային բարեկամուց»: Մի քանի ժամանակի յետոյ, երբ կլինանայ, որ մահուան պատիժը փոխարինուած է ցմահ բերդարկեալ սրտը, կրկին գաղտնի կերպով կը զրէ մի երկրորդ նամակ, ուրկէ կը բազմուի այս տղերքը. — «Եթէ հայ ժողովուրդը պիտի համարի իր բաղձանաց, թող իմ մարմինս ազատ բայցօղեայ տեղ զիշատիչ գաղանների կեր ըլլայ. իսկ եթէ ոչ, կը ցաւիմ որ պիտի ձեռքերէ շիթայեմ այսպէս բանալն մէջ պիտի մեռնիմ: 12 թերթ հարցաքննութիւն տուի և մաղի շափ դիս գառապարտելու բան չկար. բայց Տաճար



վարդապետի մէկ տաճկերէն գրութիւնը, տէր Սուրբափե  
և լուսարարի (մայր եկեղեցիին) ստորագրութիւնները  
զիս մահուան կամ կորստեան դատապարտել տուին...  
Մնա՛ք բարեաւ։”

Ջանկիր լեանն ամուսնացած է և ունի երկու արու  
զաւակ:

Այն անձը, որի եռանդուն, անձնուրաց գործունէութիւնը  
քաջալիր է մեզ, որի յանուգն ու համակրելի կերպարանքը  
յարգանք կը ներշնչէ ամենուս, այդ անձը զգալի կորուստ  
մ’է ժողովրդական գործոյն, որի համար կարծես նա  
ծնեցաւ աշխարհ և որի այրիներուն, աւա՛ղ շատ շուտ  
եղաւ նա անմուսնայի զոհ:

Սիրելի Յարութիւն, սրտակից ընկեր, նուիրական  
պարտք համարեցայ գրել այս տողեր և նուիրել քո  
սիրոյն. ևս կտամ „Հնչակի“. „Հնչակ“ թող հնչեցունէ  
հայ յեղափոխական անձնուրաց սրտերու. զու օրինակ  
հանդիսացար, թո՛ղ հետեւին քեզ նորա, և քո ընկերք  
պատմութեան և իրենց սրտերու մէջ կը կանգնեցնեն քո  
յիշատակի կոթողը:

Ընկեր .

Հ Ա Յ Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ս Ա Ս Ա Ն Տ Է Ռ Օ Ր .

Յայտարարում ենք Հնչակեան կուսակցութեան Յեղա-  
փոխական Գաղտարանի հետեւեալ պաշտօնական Վճռա-  
գիրը .—

ՎՃՌԱԳԻՐ .

„Ըստ պատձական օրինաց արամադրութեան,  
Սուրբ Կործի արգելք եզրդ լրտեսներուն ու մտա-  
նիրչներուն արժանաւոր վարձատրութիւնը ՄԱՀ է:

„Յեղափոխական Գաղտարանը հետեւեալ վճիռներն  
կայացրեց . 1) Պատժել Տաճատ վարդապետն այն  
մատնութեանց համար, որ նա արած է Յարութիւն  
Ջանկիր լեանի և սորա մէկ ընկերի մասին թիւրք  
զինուորական ատենին մէջ: 2) Պատժել պայտատական  
յայտնի լրտես Անատասը: Այդ վճիռներն գործա-  
դրվեցան:

Հայ Յեղափոխական կուսակցութեան  
Մասնախումբ Կ . Պօլիս:”

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր .

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Թ Ի Ի Ր Ք Ի Ա Ի Յ .

(Սեփական թղթակցից)

Կ . Պօլիս, 20 օգոստոս 90 .

Տեղոյս հայոց և թիւրքաց յարաբերութիւնը քանի  
կերթայ աւելի կը վատանայ: Կառավարութիւնը խելքը  
կոսնցուցած ինչ ընկը չգիտէ: Սնցեալ օր Հաղարպետ  
զոտ անունով մի խեղճ մարդ հարցաքննութեան ենթար-

կեր է, որպէս զի խննայ թէ ինչու՞ Հ ա Ղ ա ր ա պ ե ա  
և ան կանուանուի: Մանուէլ Միրափարեան անունով մի  
հայ հիւանդ ճանապարհորդ գէպի Բոսնիայ գնացող  
կձերբակալէ և կրանտարիէ ասանց հարցաքննութեան,  
եօթն օրէ ի վեր գեւ բանտն է խեղճը: Այլ կրնաք  
երևակայել գուառներուն վիճակը, երբ Կ . Պօլիս այդպէս  
է: Հայաստանի ամեն կողմերէ սպանութեանց, սաւան-  
գութեանց, յափշտակութեանց լուրեր կհասնին շարունակ:  
Բոլոր բրիտանիաները կտտորելու սարսափն ընդհանուր  
է ամբողջ Հայաստանի մէջ: 3 . 4 օր ասա՞յ տեղը հասան  
Եւլէզ օզլի Ալի պէյ և Շէյխ Շէմէտափն Էֆէնափն,  
Սերաստիոյ հայերը կտտորելու պատրաստօրդներուն  
զլիտարները և աղատ առօք . փասօք կպտտին:

Քաղաքէս մի քանի ժամ հետո թէքիր Տաղ կոչուած  
փոքր քաղաքին մէջ հայ ժողովրդեան և թիւրք ստտիկա-  
նութեան ու զինուորներու միջև պատահած արիւնահեղ  
կոխը մեծ ապաւորութիւն ըրաւ հոս Այդ քաղաքը,  
ուր բայտապէս հայեր կրնակին, ամեն տարի Ատուա-  
ժածնի տօնին մեծ հանդէս տեղի կունենայ. մերձակայ  
գիւղերէն շատ հայեր կհասարսին և կմասնակցին տօ-  
նական ուրախութեանց: Այս տարի կառավարութիւնն  
ուզեց արգելել հայ ժողովրդեան այս հանդիսակատարու-  
թիւնը: Հայ ամբոխն ընդդիմացաւ, ստտիկանք ու  
զինուորներ սկսան անխնայ հարուածել ժողովուրդը. սա  
ալ փայտով, աթոռներով, ունեցողներն ալ գէնթով խնք-  
ղինքինն արաչտպանեցին: Երկու կողմէն ալ սպանուածներ  
կան, վիրասորներ շատ են, բայց ճիշտ թիւեր չունեմ որ  
հազարդեմ:

Վիեննայի Միսթարիաններէն Յակոբ վ . Քեսուէեան  
Տրապիզոնի ժողովրդական յուզման պատճառ եղաւ: Այժմ  
զլուրը կախ գեւ կըրձի հոս Ահա այդ անցքն ըստ իր  
պատմածին Տրապիզոնէն երեք օրուայ ճանապարհ Կարին  
Կիւմիլիանէի մօտ թիւրք զինուորները վրան կյարձակին,  
կառքէն կհանն զինքը երկու ճանապարհորդակից ընկեր-  
ներու հետ, հարցաքննութիւն կանեն և աթ օր հոն  
չլթայակալ կրանտարկեն. յետոյ իր երկու սրտաւէական  
ընկերներու հետ կապկապած՝ ձիերով Տրապիզոն կյարձ-  
նեն: Երբ այս քաղաքին մէջէն անցնելով բանտը կտանէին,  
կաթօլիկ հայոց առաջնորդական փոխանորդը ժողովրդին  
հետ միասին կազին յստիկանայ ձեռքէն խլել կանոնք,  
բայց չեն յաջողիր. ամբոխը կրազմանայ, ստտիկանք ձիերը  
կըչեն. միջամտող սեղական ստտիկանք կձեռուին ժողովր-  
դէն: Այդպիսով կառավարութեան գուտը կհասնին. նոյն  
խիկ այդտեղ կչարունակուի գարձեալ ժողովրդին և  
ստտիկանայ ընդհարումը: Կառավարական բարձր պաշ-  
տօնեայք և զինուորք միջամտելով խառվութիւնը կհանդար-  
տի: Քննութիւն ընելով կիմացուի, որ ձերբակալները  
բարբոխն ամուկ են և կարձակուին. խիկ առաջնորդին  
փոխանորդը, որ ժողովրդին գլուխն անցած էր, գաղտնի  
կերպով ստտիկանապետին սենեակին մէջ շատ ձեռուեղէն  
յետոյ կձանբուի, սպապրելով որ ոչ որին բան չըսէ: Մի  
քանի օր յետոյ կհրամայուի իրեն հետանալ Տրապիզոնէն,  
սպանուելով որ հակառակ պարագային ձեռքը սա նը, ձ

Թայլամ իբր խոստարար կերպով Պօլիս Հիւս նա ալ խեղճ ու կրակ կթափառի հոս:

Մինչ հայ առաջնորդներ Պօլիս կերպովն, հայ պան. գուխաններ հայրենիք երթալէ կարգիւրին և ամեն օր զինեալ թիւրքեր ու բրդեր Հայաստան կերթան: Այդ գնացող պաշի, սուլտոք զինուորներու՝ մէկ հրամանատար պիտր էր և ահա համբաւաւոր Մուսա պէյն ութ օրէ իւր սնայտացած է տեղէս: Կրնանք զուշակիլ թէ ս'ը գնաց: Կորա հեռանալէն յետոյ սուլթանը արսոր կհչու. մայէ անոր համար Կ'նչ կատակերգութիւն:

Այս օրերս Բ. Գոնէն Հայաստանի գաւառաց կու. սակալներուն հրամանն զնաց, որ հայ ժողովրդի կողմէն շնորհակարութեան ու զօհութեան հանրագիր պատրաստուին և զրկուին Պօլիս: Կուսակալներն ալ լսածին համեմատ՝ մեծ եռանդով կաշխատին այդ բանին, թէ՛ խօստուժ, թէ՛ սպանակիք, թէ՛ պատիւ, թէ՛ բանա միա. ժամանակ ի գործ գնելով:

Անցնիւրը իրենց երկրէն եկած հարստահարութեանց մասին մի հանրագիր տուին ազգային ժողովին, որով մէկ ճար կինդրուի Դոզովն ուշադրութեան անդամ շատա այդ գրութիւնը:

Յուլիս Տաանէհինգին ստթիւ. ձերբակալեալ երկու յայներու մասին քանի անդամներ կուզէի գրել, բայց լսած. ներուս չէի հատարա: Այսօր արդէն կատարուած իրողութիւն է: Մէկ յոյն տաանէհինգ և միւսը վից տարի բանտարգել արքարի գատապարտուեցան: Գոցա յանցանքն այն է, որ Գուժ. Գարուի Յոյցի օրը հողեկան հանդիման չկարենալով գոսկլ իրենց բաղաակից սարուկ ազգի մը ազատութեան առաջին շարժումն տեսնելով «Ձիթօ Արմէնիա» (Կեցցէ՛ Հայաստան) պաշտպեր են:

Թիւրք կատապարութիւնը մեծ տագնապի մէջ է. իրար հակառող հրամաններ, անմիտ սպանակիրներ վերջ չտանն: Անբարոյականացած թիւրք մամուլը արձա. գանք կուտայ յիմար կատապարութեան և կողորորթէ գայն: Այս տագնապալից վիճակին նորանոր զէպրեր սպասելի են:

Պերճ:

Կ. Պօլիս, 30 օգոստոս 1890.

Օգոստոս 28 ին երեքշաբթի օրը երեկոցեան ժամը 10 և կէսին տանները Հայ հիպոփոխական Կուսակցութեան սարսափածից պաշտօնեաց մը Կէտիկ. փաշայի եկեղեցին երթալով այդ եկեղեցւոյ բարոցիչ ՄՍՏՆԻՉ ՏԱՃԱՍԸ գուրս կը կանչէ իր սեփական խուցէն և երբ նա կուգայ «Այսպէս պիտի տեսկին մա ա ն ի չ ն ե ր ք» պտտարով անոր կուրճին կուզէ ուղիւղելի երկու հարուածներ. առաջին հարուածը ծանրապէս կը վիրաւորէ մատնիչ վարդապետին ձախ թեւը, իսկ երկրորդ հարուածը նորա կուշտին ցը գպի կողմնակի և արիւնաթաթախ գետին կիցնայ գաւաճան վարդապետը: Արդէն յայտնի Յեզափոխական Կուսակցութեան Պատմական Ատեանի մի «Ահագիրը» կձգէ թէ ք օ Ր ի ս ա ը ա ճառի մարմնոյն վրայ և կանայտանայ: Դամկոչք թէ և

կհարածեն զինքը, բայց չեն կրնար բանի. ցարգ ձերբա. կալուած չէ: Անմիջապէս խոսն բազմութեամբ ժողս վարդը կը ընցուի եկեղեցւոյն բակը. կը համին նաև տտիկանք, եղելութիւնը կիւսանան և կերթան փնտսելու չա ր ա գ ս ր ծ ի ն և տեղեկադրելու այս գործն իրենց պետին և սուլթանին . . . Այդտեղ ալ կգանին Վճագիրը և ապշութեամբ ու տոտրուով կկարգան ներկայք: Շուտով բմիկ կը բերուի օրք քննելով վիրաւորելոյն վիճակը՝ կը յայտարարեն թէ մահուանը ազատելուն յոյս կայ, բայց ձախ թեւը պէտք է կտրուի:

Ընթերցողք կը յիշեն թէ Տ ա ճ ա տ ի գործած մաա. նութիւնն եղած է յայտարարելն թէ Գուժ. Գարուի Յոյցին առեն թուգրան ու պատկերը կտրուող Յարութիւն Չանկիւրեանն է. նոյն յայտարարութիւնը գրաւոր և թուրքերէն ալ տուած էր որուն ստորագրած էին նաև Տ . ՍՈՒԲԻՍՍ և ԼՈՒՍՍՐՍԻ ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ: Ասկէ զատ Տ ա ճ ա տ ը թէ առ անձնականաց և թէ բեմի վրայէ խօսած ժամանակ յանդգնած էր քանիցս ս ր ի կ ա յ անուանել այդ ժողովրդային զէպրին հեղինակները՝ ի ս լ ա մ ա ց բ ս ն ա կ ա լ ի ս ա լ ի փ ա յ ի ն ա չքը մտնելու համար . . .

Դադարեղն իբր արդար գառաստանը ըբաւ Յեզափ. Կուսակցութեան Պատմական Ատեանը իբր մահալճիւն արձակեց Տ ա ճ ա տ ի և այլ ոմանց նկատմամբ, և եթէ Տաճառ մահուանէ ազատուելու յոյս ունի, զէթ իբր ձախ թեին կարուելովը իբր մատնիչութեան անձնիլի նշանը յախտանա պիտի կրէ իբր վրայ՝ յամօթ և ի խայտա. սակութիւն անձին, յորինակ և ի ստեղծմն իբր նմանեաց . . .

Չմտանամ նաև ըսել թէ սարսափածից երկտատարգն մեկնելէ յառաջ յայտարարեր է Տաճառին թէ զեւ 3 . 4 անձինք իբր բաղտին պիտի արժանանան . . .

Հայ ժողովրդեան վրայ շատ քաջալիրէ՛ և կենդանա. ցուցիչ ապաւորութիւն գործեց այս զէպրն. ամէն որ կարախակցի իր ընկերներին և կը զովէ այս սարսա. փածից անօրինութիւնն: Տեղական լրագիրք զարարական լրութիւն կը պահէն և այսուիկ լսելեայն կը խոտտովանին կատապարութեան ահարեկութիւնն ու չիտթութիւնը:

Պ ա ր տ ի գ ա կ ն Կ ի կ ս մ ի գ ի ա

Ատարազարի զէպրն արդէն հազարեցիներ: Դոզովրդեան մէջ չըջած զբոյցներուն նայելով՝ որոց ստուգութիւնը տակաւին չկրցանք կատարելապէս հաւատուել: Ատարա. զարէ զատ, ի Պարտիզակ և ի Նիկոմիդիա ևս պատահած են կարեօր զէպրեր:

Ըստ հաւանակացոյն լրաց, Պարտիզակի մէջ երկու հայ շուկայի մէջ իրարու հետ հաւած ժամանակ, տեղոյն գայմազամբ անկէ անցնելով կըսկսի զիրենց հայհոյելով ու անարգելով յանդիմանար Կարիճ հայերը՝ հասարակաց թնամոյն առջև խոյն մտանալով իրենց կտիւր և չհանդուրժելով նորա անարդանաց, կը յարձակին անոր վրայ և այնպէս մը կը ձեծեն որ ոսկորները կը ջարգեն: Թուրքեր և զինուորներ կը համին իրենց կատապարչին օգնութեան, միս կողմէ հայերն ալ իրենց ազգակցած ի

նպատակը միջամտեն . այդպիսի կսիւր կընդհանրանայ...  
Հինգ թիւրք մանասարժ կապանուն . մանրամասնութիւնը կը պակսին գետ :

Ս ե ր ա ս ա ի ա

Կը յիշուի թէ վերջերս այլ և այլ գաւառներէ շնորհա-  
կարութեան հանրագրեր հասան առ սուրբանն . այս կար-  
գին մէջ կը գտնուէր նաև Սերաստիա որոյ առաջնորդն՝  
Պ ե ա ր օ ս և պ ի ս կ ո զ օ ս և ս ստորագրած էր հան-  
րագրին : Այդ նոյն բողոքէն հասած մասնաւոր նամակէ  
մը կը տեղեկանամք որ այնտեղի ժողովուրդը ըսելով  
իրենց առաջնորդին այս գաւառանութիւնը՝ յի դայտըթով  
և կատարարար կը յարձակի առաջնորդարանի վրայ,  
ամէն ինչ տակն ու վրայ կրնէ և առաջնորդը մահացու  
կերպով կը ձեռնէ . . . :

Վձենուրեր և զրեթէ միւնայն ժամանակ այսպիսի  
ցոյցերու և յարգանց երեան գաւն՝ յայտնի ապացոյց մ'է  
հայ ժողովրդին կենսանորոգ ոգեւորութեան, և միանգու-  
մայն՝ որ ինչ աւելի միտթարական է՝ ամենուրեք կանո-  
նաւոր և զեկաւարեալ կազմակերպութեան մը գոյութեան  
յայտարար նշան :

Համագումարի անդեկագրոյն յետոյ գործուէն և  
պատրիարքի կողմէ վերասին գառ . նախարարութեան  
զրկուելէն ի վեր՝ պատրիարքն իրմէ շքուպատուած գովելի  
ինաստութեամբ մը՝ քաջուած առանձնացած է իւր տունը  
ի Վարրի գիւղը : Ահա թէ այս անթիւ ինչ կը զրէ  
„Արևելք”, օգոտա . 29 ին . „Ալմին . Տ : Խորէն Ս . Պատրիարք  
Հայրն երկու օրէ ի վեր հիւանդ է և անկողնոյ կը ծա-  
ւայէ : Կ . Վձենագաւառութիւն կը տատապի արեան  
բորբորումէ, որ այս օրերս աւելի սաստկացած է : Ս . Պատ .  
Հայրը դարմանող բժիշկները գոտարեալ հանգիստ պատ-  
ուիրած են Կ . Վձենագաւառութեան :”

Մինչ ք . Գուան մի կողմէ կիրթձէ ազգն և Կրօսան  
խարիւ հաչոց պահանջներուն զոհացում ապ խոտանա-  
լով — և արախ եմ որ իր խելայեղեալ արարքներով  
չուտով իւր դիմակը վար եկաւ, — միւս կողմէ կըարու-  
նակէ խոտազոյն անօրինութիւններ ի զործ գնել Հայոց  
աղքատիկ առանձնաշնորհութիւնքը արմատաքի բնաջինջ  
անելու . նպատակաւ : Արդէն տակէն մի քանի ժամանակ  
առնջ կառավարութիւնը անօրինած էր պարզեւտրաշու-  
թեանց ճառերն նախ քան արտասանուելն ներկայացուելն  
վերաքննիչին . այժմ ալ նա կձեռնարկէ լուծել ազգային  
ընկերութիւնքը : Արդարև այս մտօր պաշտօնագիր մը  
հասած է երեքաբթի օրը պատրիարքարան Կատական  
Կախարարութեան :

Կառավարութիւնը պատերազմական պատրաստու-  
թիւններ կաւանի : Տխարպեթի և Տէրսիմի անտաններն  
այրելու համար Կերօպոյէն քարիւղ կրկուտին, որպէս զի  
հայոց տղատակութեան ասան՝ պատասպարան շլինին :

Տաննէկինգ Յովսէփն յետոյ կառավարութիւնը մտա-  
տանջութեան մէջ է խիտա . ա մ և ն բ ա ն կ ի ս օ ս ա  
ց ու ի Յ և դ ա փ օ ի ս ա կ ա ն „Գօմիթէի” ան գ ա մ :

ն և բ ը ց ու ց ը ն ս զ ի ն , ս ր օ ց ա լ Յ և դ ա փ օ  
խ ա կ ա ն „Գօմիթէն” ի ր կ ո զ մ է ն մ ա հ կ ի ս օ ս  
ա տ ա ն ա յ :

Պ ա յ ա զ ի ա ի կ ա ի ւ ը .

Քառակոն հաւատարմագրեր կիմանանք թէ Պայազիտի  
հայերը մեր սուսիացի եղբարց հետ միացած ապստամբած  
են . երկու կողմէ մեռեալներ շատ կան . հայերը վերուցեր  
են բաւական թիւով հրացան և մի թնդանօթ :

Պերճ .

Կ . Պօլիս, 29 օգոտոտի, 1890 .

Պայազիտի մէջ հայոց և թիւրքոց իրարու դէմ առե-  
լով թիւը շատ աւելացած է, մանաւանդ կառավարութեան  
վերջին անհանդուրձելի խոտու թեանց պատճառաւ . հայերը  
չտախաղանց զրգոտած են : (Օգոտոտ 18 ին Պայազիտի  
մէջ թուրք սպայ մը Յովսէփ պէյ անուն հայէ մը խիտա  
կերպով սուրք ուղիւն համար՝ հայը չկարենալով համ-  
բերել, զարկեր սպաներ է սպայն և յաջողք է ճորպարել  
թիւրք արգարագատութեան ճիւղաններէն :

Աւազիտի շրջակայքը Նւշարիլիսէի վանքին մօտ՝ ճօճան  
գիւղին մէջ՝ զինուոր մը գարձեալ սուրբի համար հայ մը  
կանարգէ և հայն գոյն սպանելով խոյս կուտայ : Այս և  
նմանօրինակ բազում գէպեր ցոյց կուտան թէ հինգ  
հարիւր տարիէ ի վեր թմրած հայու ետանդն ու արիւտ-  
թիւնը տակաւ կարթննայ և վրէժխնդրութեան ու ինք .  
նպաշտպանութեան ուղին կարծարքի հայու սրտին մէջ :

Կարնոյ նշանաւոր գէպքն երկու շարաթ վերջ՝ Բասնի  
Ալի Տէքրէք հայ զիւզի պատուաւոր բնակիչներէն  
Օհան քէհեայի հովիւնը ոչխարաց հօտն արածելու  
ժամանակ, այդ զիւզի մօտ թւայխօժա (Թաւհիր . Խօժա)  
զիւզացի Խարահիմ անուն շարագործն որ ուրիշ օճիրնե-  
լով ալ անուն հանած է՝ իւր մարգերով կը յարձակի  
այդ հովիւներուն վրայ : Օհան քէհեայ, իւր սրդիքը և  
հարաները մօտաւոր տեղ մը գանուելով հովիւներուն  
օգնութեան կը հասնին : Աւազիտիները անոնց վրայ ալ կը  
յարձակին . արխնասուչա կիւս մը կըտկսի սրուն կը  
մասնակցին նաև այդ երկու հայ հարաները : Այդ կուոյն  
մէջ կըսպանուին Օհան քէհեան, իւր տղայոց մին և  
հարաներէն մին :

Գանք հիմն կառավարութեան բնած ընթացքին :  
Հատանդալայի կառավարիչ հանրածանօթ Հիւսէփն  
պէյը՝ որ եղբորուրդին է սուրբանի խն ա մ ի և միան .  
գամայն թիկնապահ Նամայիլ Հազգը փաշայի՝ թուրք  
հրոտակներին ամենին շինուտեր, այլ հայ զիւզացոյ  
ողջ մնացածները կը ձերբակալէ և Հատանդալայի  
բանախն մէջ մէկ ամիս բանտարկելէ ու շարչարկէ յետոյ,  
75 ոսկի կաշաւք ասնելով միայն կը թողու, փտաճ  
լինելով որ իւր յանցանքը կը ներուի սուրբանէն՝ ի շնորհս  
իւր հօրեղբայր Նամայիլ Հազգը փաշայի պաշտպանութեան :  
Արդէն յիշեալ փաշայն և Հիւսէփն պէյը կը պատկանես  
Խաթան օգրու կոչեցեալ համբաւաւոր հարստահարչի  
երգաստանին որ վերջին պատերազմէն յետա՞՞ Կարիչ

մտա Պ ն հ լ ի Ս, հ մ է տ զիւղը կը բնակէր և որ կարո՛ւ գրամանէն վերջ ցրուեցաւ:

Յ ու զ մ ու ը ք յ Ա տ ա ր ա զ ա ր . — Հայկական ընդհանուր սգեորութիւնը և կառավարութեան դէմ յարուան զայրոյթը արտայայտող ցոյցեր և յուզումներ կարգաւ իրարու կը յաջորդեն և այս մասին կարծես հայերը քաղաքէ քաղաք իրարու հետ կը մրցին: Կարնէն, Տրապիզոնէ, Կ. Պօլսէ, Ստամբուլէ . . . վերջը՝ կարգը եկած է Ատարազարի:

Ատարազարի յուզմանց մասին, զորս կողմարկին նաև տեղական լրագիրք, հետեւեալ տեղեկութիւնք հասած են մեզ: Կըսպասեմք աւելի մանրամասն լրոց:

Կ. Պօլսէ յատկապէս Ատարազար գրկուած պաշտասկան լրատես մը՝ աղգաւ յայն և Անաստաս անունով, օգոստոս 25 ին ցերեկը շուկայի մէջ լայնարձակ կերպով կըսպաննուի սաբափարկու հայ յեղափոխականաց կողմէ և «Մ ա հ Հ ա յ ս ց Թ շ ն ա մ ի ն և ր ու ը ն» վճռագիրը վրան կը ձգուի: Աստիկանք կը հասնին և կուզեն սառնութեան հեղինակը ձերբակալել: յեղափոխականք շուգելով անձնատուր ըլլալ իրենց զէնքով կը զիմուզեն օտտիկանաց, կուր կը մեծանայ, զինուորք կը միջամտեն, ախանառես հայերը զրգուելով՝ կը զիմեն զինուորաց վրայ, ժողովրդեան և զիււորաց մէջ արկենահել ընդհարում մը տեղի կուեննայ, յորում 10—12 թուրք զինուորք կը սպանուին, նոյնչափ ալ հայերը կորուստ կուեննան, երկուստեք բազում վիրաւորեալք կան: Բազում ձերբակալութիւնք:

Տեղական լրագիրք թեթև իմն պատմելով այս դէպքը և սխալմամբ Նիկոմիդիա գրեւով փոխանակ Ատարազարի, կը հաղորդեն թէ տրբաթ օրը հեծելազորաց գումարտակ մը զրկուած է անդ ընդ հրամանատարութեամբ՝ զերգնատակետ խայրի պէյի Շարբաթ օրն ևս Վատըղելի Սիւրիսէ զօրանացէն 120 հեծելազորք զրկուած են անդ:

Հ ա մ ա գ ու մ ա ր ի տ և զ և կ ա գ ի ր ը  
Երեկ գրեցի ձեզ դատական նախարարութիւնը Համագումարի երկրորդ տեղեկագիրը յետո գարծուցած է, խորէն պատրիարքն անմիջապէս թ ա գ ի ր մը զրկելով՝ կըսէ թէ այդ տեղեկագիր յինքեան կը բովանտակէ հայոց ազգի պահանջքն որմէ մտղի շափ շեն կարող շեղել, հետեաբար վերատին կը զրկէ զայն ի նկատառութիւն: Այսպէսով կրկին դատական նախարարութեան կը յանձնուի յիշեալ Տեղեկագիրը պատրիարքարանի գարծուատարին ձեռամբ օգոստ. 27:

Հայոց և Յունաց առանձնաշնորհմանց խնդիրները քննելու՝ պաշտօն ունեցող Յանձնաժողովը սկսած է իւր նիստերը ընել: Ինչ զայրացուցիչ կատակերգութիւն:

Պերճ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ.

«Հնչակը» իրրև պաշտօնական օրգան Յեղափոխական

Կուսակցութեան, իր պարտականութիւնն է համարում խնդակցութեամբ ողջունել այն բազմաթիւ նորակազմ մասնախմբերին, որոնք միացած են և շարունակում են միանալ Կուսակցութեան հետ: Այդ մասնախմբերին յիշեցնում ենք, որ բարեհաճեն միշտ կանոնաւոր յարաբերութեան մէջ լինել իրենց վարչական կենտրոնների հետ և պարբերաւոր տեղեկութիւններ տալ նրանց իրենց գործունէութեան մասին: Մի և նոյն ժամանակ խոտապէս պատուիրվում է, որ մշ մի մասնախումբ Կուսակցութեան ընդհանուր անունով որ և է գործի չը ձեռնարկէ՝ առանց իրենց վարչական կենտրոնների տեղեկութեան:

Կուսակցութեան յեղափոխական գործերի համար գրամական օգնութիւն ձեռք բերելու մասին ևս պէտք ասուք մէկ երկու խօսք:

Գրամական տեսակէտից հայերին այնքան խարել են, այնքան նրանց հաստան ի շարն են գործ գրել և շարունակում են նոյնը, զանազան ազգասիրական, հայրենասիրական և նոյնանման պատրուակներով ձեռում գործելով, որ այսօր հայերը թերահաստ են դարձել և կատկածով են նայում ամենքի վրայ: Հնչակեան Կուսակցութիւնը միշտ իրեն հետու է պահել այդպիսի ընթացքից: Յեղափոխական Սուրբ Գործին նիւթապէս օգնելու նախաձեռնութիւնը Կուսակցութիւնը միշտ թողել է հայ ազգին իրեն, որին նա միշտ լակ մի խորհուրդ է տվել: Օղնել միմիայն նրանց, որոնք յիբաւի՝ գ ո ր ծ ու մ են:

Կուսակցութեան մասնախմբերի առանձին լուրջ ուշադրութիւնն ենք դարձնում նրա այդ սկզբունքների վրայ:

Իրրև պաշտօնական օրգան Հնչակեան Կուսակցութեան, յատուկ պատուէրի համեմատ՝ մենք յայտարարում ենք, որ Կուսակցութեան Վանձարանում իր ժամանակին ստացուեցան Ճ. Ճ. Ճ. — 15 օսմանեան ստիկ. Պարսկաստանի Կացին — 48 Ֆրանկ և «Հնչակի» խմբագրութեան միջոցով Պ. քաղաքից X. — ից 400 րուբլ:

Շնորհակալութեամբ ստացանք իրրև նպատակ «Հնչակին» հետեւեալ գումարները. Վիեննա Ա. — ից 45 Ֆրանկ. Լոնդոն Ար. — ից 7 Ֆր., նոյն քաղաքից Ա. Ո. Ա. — ի մի. Լուսով Պարսկաստանից Ար. Խ. Գ. — ից 14 Ֆլորին. կրկին նոյնը՝ 6 լիլինգ. Ժ. քաղաքից Ք. — ից 17 Ֆրանկ:

«Հնչակի» յաջորդ համարը լոյս կտեսնէ մի շարաթից յետոյ:

Յօղաւաններ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցեալ.

Montpellier (France). — M. Beniard. Poste Restante (25)  
Իսկ գրամ ուղարկել.  
Geneve (Suisse). — M. Daniel. Poste Restante.

Լոնդոն. Հայկական ազատ ապարան.